

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran  
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts  
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their  
gratitude to “JTI ARMENIA” CJSC  
for supporting the publication of this volume

Մատենադարան  
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և  
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը  
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին  
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN  
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**BULLETIN OF MATENADARAN**  
**38**

Yerevan – 2024

МАТЕНАДАРАН  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
**38**

Ереван – 2024

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**38**

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան  
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր),  
Վահան Տեր-Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե  
Թորոսյան, Թեո վան Լինտ, Արմեն Մովսեֆյան, Արտաշես Շահնազարյան,  
Գուրգեն Գասպարյան, Նազենի Ղարիբյան, Արուսյակ Թամրազյան, Հայկ  
Համբարձումյան:

«Բանբեր Մատենադարանի» 38, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի  
ինստիտուտ. Երևան, 2024, 352 էջ:

**ԵՐԿՈՒ ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ՝ ԽԱԶԿԱՎԱՆՔԻ  
ԵՒ ԿԱՐՆՈՅ ԳԻՒՂԵՐՈՒՄ ՈՒ ԱՆՈՆՑ  
ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՄԱՍԻՆ**

*Բանալի բառեր՝ Խաչկավանք, Կարնոյ գիւղեր, Եկեղեցիներ, վանքեր, վիմագիր արձանագրութիւններ, Տ. Թէվէքէլեան (Արշակ, Սուրէն), Զաւէն Եպիսկոպոս մահտեսի Պապայեան, խաչքարեր, ձեռագրեր, ժողովրդագրութիւն, դպրոցներ, Հայոց ցեղասպանութիւն, ՄՄ 9026:*

Հետագայ էջերով հրատարակութեան կու տանք իրարու առնչակից եւ զիրար ամբողջացնող երկու անտիպ փաստաթուղթեր, որոնցմէ առաջինը կը խօսի Կարնոյ Խաչկավանքի եւ անոր վիմագիր արձանագրութիւններուն ու խաչքարերուն, իսկ երկրորդը՝ Կարնոյ գիւղերուն, Եկեղեցիներուն, վանքերուն, անոնց վիմագիր արձանագրութիւններուն, խաչքարերուն, ցեղասպանութենէ առաջ եւ վերջ հայ եւ օտարազգի ազգաբնակչութեան թուաքանակի, դպրոցներու եւ այլնի մասին:

Իւրաքանչիւր փաստաթուղթի մասին կը խօսինք առանձինն.

**Ա. փաստաթուղթը** յօդուած մըն է, գրուած՝ 1899-ին եւ ղրկուած՝ Կ. Պոլսոյ «Բիրական» շաբաթաթերթին՝ առ ի հրատարակութիւն: Ան մնացած է անտիպ, հաւանաբար իր նեղ մասնագիտական բովանդակութեամբ հանդէսի ընդհանուր ուղղութեան չհամապատասխանելուն եւ կամ իր պարունակած յունատառ հատուածին համար, որ կրնար տպագրական դժուարութիւններ ստեղծած ըլլալ հանդէսի խմբագրութեան:

Յօդուածին հեղինակն է «Արշակ» եւ «Սուրէն» ծածկանուններով եւս հանդէս եկած Տ. Թէվէքէլեան, որուն ինքնութիւնը անձանօթ կը մնայ մեզի: Ըստ երեւոյթին, ան կարնեցի է, կամ գէթ 1898-1899-ին կ'ապրէր Կարին, որովհետեւ իրմէ մեր տեսած գոյգ նամակներն ու գրութիւնները յղուած են այդ քաղաքէն եւ կամ կը վերաբերին անոր:

\* Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարան, ՀՅԹԻ, mihran.min@gmail.com, ֆոդվածը ստանալու օրը՝ 16 ֆունիսի, 2024, ֆոդվածը գրախոսելու օրը՝ 27 ֆոկտեմբերի, 2024:

Յօդուածագիր Թէվէքէլեանէն մեզի ծանօթ են նաեւ հետեւեալ երեք գրութիւնները.

1. Սուրէն (որ իր ծածկանունն է), «Պարերգ Բաղէշի գաւառաբարբառով», «Բիւրակն» լրագիր, Կ. Պոլիս, ԺԶ. տարի, Նոր շրջան, թիւ 34-35, 8 Հոկտեմբեր 1898, էջ 627-628: Ղրկուած է Կարինէն:

2. «Աստուած ողորմի Կաշոյի երեսկիւնի հոգուն»: Ակնէն ժողովրդական աւանդութիւն մըն է, գրի առնուած՝ Կարնոյ մէջ: Հրատարակութեան համար 15 Փետրուար 1899-ին Կարինէն ղրկուած է «Բիւրակն» լրագրին, բայց ան եւս չէ հրատարակուած:

Հեղինակային ինքնագիրը՝ եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարան (ԳԱԹ), Թորոս Ազատեանի ֆոնտ, 5/III:

3. «Բառեր Կարնոյ բարբառով», հաւաքեց Տ. Թէվէքէլեան, «Բիւրակն» լրագիր, Նոր շրջան, ԺԷ. տարի, թիւ 28, 7 Յուլիս 1899, էջ 442-443:

Թէվէքէլեանի «Բիւրակն»-ի խմբագրութեան յղած 15 Փետրուար 1899-ի նամակէն կ'իմանանք, որ ան նախապէս նոյն լրագրին ղրկած է շորս այլ յօդուածներ եւս, որոնցմէ հրատարակուած է միայն մէկը:

Նոյն նամակին մէջ Թէվէքէլեան յայտնած է նաեւ, որ «... Ատկէ վատ մի ուրիշ առաջարկ եւս. արդեօք կարելի՞ է յօդուած առ յօդուած յղել Ձեզ Կարնոյ Ազգ. Վարժարանի ազգային ձեռագիրներու արտագրութիւնները, զորս ի գիր առած եմ մասամբ եւ մնացեալն հետզհետէ կ'առնում»: Ակնարկութիւնը անշուշտ Կարնոյ Ազգային Արժնեան վարժարանի ձեռագրաց հաւաքածոյի մասին է: Անոր կազմել ծրագրած յիշեալ ցուցակը չէ հրատարակուած ո՛չ «Բիւրակն»ի եւ ոչ ալ որեւէ այլ հանդէսի մէջ:

Վերոնշեալ գոյգ նամակներէն կը պարզուի, որ ան օգտագործած է Սուրէն եւ Արշակ ծածկանունները:

**Բ. փաստաթուղթը** Կարնոյ դաշտի 22 գիւղերու մասին է, ուր տրուած են իւրաքանչիւր գիւղի մասին հակիրճ ծանօթութիւններ՝ անոնց հայ եւ թուրք ազգաբնակչութեանց թիւերը ցեղասպանութենէ առաջ եւ վերջ, թուրքերու գիւղ հաստատուելու թրուականը, գիւղի դպրոցի, եկեղեցիի, գերեզմանատուներու եւ մօտակայ վանքերու մասին տեղեկութիւններ և այլն: Խիստ կարեւոր են եկեղեցիներու մանրամասն նկարագրութիւններն ու անոնց վիմագիր արձանագրութիւններու ընդօրինակութիւնները, ինչպէս նաեւ խաչքարերու եւ ձեռագրերու մասին հաղորդուած տուեալները:

Փաստաթուղթը անթուակիր է, բայց գրի առնուած է ռուսական բանակի Կարին գտնուած միջոցին (3 Փետրուար 1916-28 Փետրուար 1918), որովհետեւ հոն կան ռուսական բանակի ներկայութեան մասին վկայող քանի մը ակնարկութիւններ եւ տեղ մըն ալ, որպէս աղբիւր, յիշատակուած է 1917 թ. հրատարակուած Լէոյի մէկ գիրքը. այնպէս որ ան ստուգապէս պատրաստուած պիտի ըլլայ 1917-1918 թուականներու ընթացքին:

Թէեւ տեղեկագրին վրայ հեղինակ չէ նշուած, բայց կ'ենթադրենք, որ ան պատրաստուած է Ամենայն հայոց կաթողիկոսի Կարնոյ պատուիրակ եւ «Նղբայրական օգնութեան միութեան» տեղւոյն ներկայացուցիչ Զաւէն եպիսկոպոս մահտեսի Պապայեանի<sup>1</sup> ձեռամբ, որմէ մեզի հասած է նոյն շրջանին առնչուող կարեւոր այլ տեղեկագիր մը եւս՝ «Համառօտ տեղեկագիր Կարնոյ եւ շրջակայ գիւղերի 1917 ամի. Համառօտութիւն երկասիրութեան Զաւէն եպիսկոպոսի միաբանի Ս. Էջմիածնի ի Կարին: 1917 թ.» խորագրով<sup>2</sup>:

Այս եւ հրատարակուող փաստաթուղթը շատ նման են իրենց բովանդակութեամբ, գիրով, գրութեան ձեւով եւ օգտագործուած թուղթով, հետեւաբար սխալ չըլլար ենթադրել, որ հրատարակուող փաստաթուղթը եւս պատրաստուած է նոյն ինքն՝ Զաւէն եպիսկոպոսի կողմէ:

Նշենք, որ Զաւէն եպիսկոպոս Կարին մեկնած ու այդ պաշտօնները ստանձնած է ռուսական զօրքերու Կարին եւ Երզնկա մուտքէն ետք, Հոկտեմբեր 1916-ին<sup>3</sup>:

Հայաստանի ազգային արխիւի այն գործը (թղթածրարը), ուր տեղ գտած է հրատարակուող փաստաթուղթը, ժողովածու մըն է Կարնոյ նահանգին առնչուող տարբեր գրութիւններու, որոնք մեծամասնութեամբ փաստաթուղթերու սեւագրութիւններ են: Հոն կան նաեւ Գարեգին Թուրիկեանի 28 Յունուար 1917 թ. տեղեկագիրը շրջանի իրավիճակին մասին, յղուած նոյն՝ Զաւէն եպիսկոպոսին. կան նաեւ այլ փաստաթուղթեր:

Հրատարակուող տեղեկագրէն կը պարզուի, որ ցեղասպանութենէն նուազ քան երկու տարի անց, թուրքեր արդէն հասցուցած էին հիմնայատակ քանդել Կարնոյ գիւղերու բազմաթիւ եկեղեցիներն ու վանքերը: Ահա քանի մը մէջբերումներ վերցուած տեղեկագրէն. «Եկեղեցւոյ անունն է Սուրբ Թագաւոր, որից միայն պատերն են մնացել, եկեղեցւոյ փայտերը քանդել եւ ի վաճառ են հանել», «Եկեղեցին քանդուած է թուրքերի կողմից...», «...մի վանք Օհան Օձնեցու անունով, որ այժմ քանդուած է թուրքերի կողմից, ամայացած», «Գերեզմանի խոյերը եւ խաչքարերը կոտորտուած են թուրքերի կողմից» և այլն:

Վիեննայի Միսիթարեան միաբանութեան անդամ, բանասէր Հ. Յակոբ Մ. Վ. Քօսեան, 1909-1914 թ. շրջած է Կարին քաղաքն ու դաշտի գիւղերը եւ մանրամասնօրէն գրած անոնց պատմութեան, տեղագրութեան, ազգաբնակչութեան, հնութիւններուն, հոգեւոր կառոյցներուն եւ տնտեսութեան մասին: Ան ընդօրի-

<sup>1</sup> **Ռոբերտ Թաթոյան**, «Քրգումի նահանգի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին (աղբյուրների համեմատական վերլուծության փորձ)», *Յեղասպանագիտական հանդես*, Երեւան, 2(1), 2014, էջ 40:

<sup>2</sup> Հայաստանի ազգային արխիւ (յետ այսու՝ ՀԱԱ), ֆոնտ 57, ցուցակ 5, գործ 142, րէրթ 26ա-35ա:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 142, ք. 17ա:



նակած է նաեւ վիմագիր արձանագրութիւններ եւ ձեռագրաց յիշատակարաններ: Աւելի ետք, այդ բոլորը հրատարակած է մեծարժէք գոյգ հատորներով<sup>4</sup>:

Եթէ համեմատենք Կարնոյ գիւղերու մասին Քօսեանի գրածն ու հրատարակուող փաստաթուղթի տուեալները, կը պարզուի, որ անոնք յաճախ կ'ամբողջացնեն զիրար, մէկուն չյիշատակած տեղեկութիւնը կը գտնենք միւսին մօտ, այնպէս որ հրատարակուող փաստաթուղթը, ինչ-որ շափով, պիտի համարել շարունակութիւնը Քօսեանի գործին, որուն տուեալները կանգ առած են 1914 թ. մօտ, իսկ հրատարակուող փաստաթուղթը պատրաստուած է, ինչպէս ըսինք, 1917-1918 թուականներուն եւ կը պատկերացնէ Քօսեանի նկարագրած բնակավայրերուն եւ անոնց բնակչութեանց եւ ազգային կառոյցներուն վերապահուած ապագայ ճակատագիրը Հայոց ցեղասպանութեան տարիներուն:

Քօսեանի գրի առած քանի մը վիմագիր արձանագրութիւններ կրկնուած են հրատարակուող փաստաթուղթին մէջ, բայց անոնք երբեմն ունին ընթերցման տարբերութիւններ, եւ այժմ դժուար է կորմնորոշուիլ ու գիտնալ թէ անոնցմէ որն է ստոյգ եւ որը՝ ոչ ստոյգ:

Հրատարակուող գոյգ փաստաթուղթերը արժէքաւոր են մէկէ աւելի առումներով եւ կրնան նպաստել Կարնոյ դաշտի գիւղերու պատմութիւնն ու մշակութային արժէքները աւելի լաւ ճանչնալու եւ ուսումնասիրելու գործին:

Փաստաթուղթերը հրատարակութեան տուած ենք ամենայն հարազատութեամբ, առանց որեւէ միջամտութեան: Փակագիծերու ( ) մէջ առնուած բառերն ու տառերը բնագրինն են, եւ զանոնք պահած ենք նոյնութեամբ: [ ]-ի մէջ մեր աւելցուցածներն են: Մեր կողմէ աւելցուցած ենք անհրաժեշտ ծանօթագրութիւնները միայն:

\* \* \*

**Ա. ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**

**Կարնոյ Խաչկավանքի եւ անոր վիմագիր արձանագրութիւններուն մասին**

Տէր<sup>5</sup>,

Այս անգամ կը յղեմ Ձեզ Կարնոյ Խաչկավանքի արձանագրութիւնները: Ասոնց հետ թէեւ ունէի գերեզմանաքարերու նկարներ ալ, բայց տեղի չէր յղել զանոնք՝ ի նկատ առնելով տպագրութեան դժուարութիւնները:

<sup>4</sup> **Հ. Յակոբ Մ. Վ. Քօսեան**, Բարձր Հայք, Ա. հատոր՝ Կարին քաղաքը. Տեղագրութիւն, պատմութիւն եւ սովորութիւններ, Վիեննա, տպարան Մխիթարեան, 1925, ԺԱ., 496 էջ, 16 թերթ ներդիր լուսանկար, Բ. հատոր՝ Կարնոյ գիւղերը. Տեղագրութիւն, պատմութիւն եւ սովորութիւններ, Վիեննա, տպարան Մխիթարեան, 1926, 184 էջ եւ 2 էջ ներդիր նկար:

<sup>5</sup> Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարան (ԳԱԹ), Թոռոս Ազատեանի ֆոնտ, 20-IV: 5-րդ էջի կոնակին գրուած է «Կարին, 2 Մարտ [18]99», որ հաւանաբար յօդուածը «Բիւրակն»-ի խմբագրութեան կողմէ ստացուելու թուականն է:

Յարգելի Յովհ. Գազանճեանի «Բարբառախօսական նօթերուն»<sup>6</sup> վրայ քանի մի կարճ յաւելումներ ունիմ, որոց հրապարակաւ երեւնալն աւելորդ չէր ըլլար կարծեմ:

Կարին, 23 Փետրուար [18]99

մնամ յարգանօք՝

Տ. Թէվէքէլեան

Կարնոյ հաշկավանքի արձանագրութիւնները

հաշկավանք (= հաշկայ Վանք) կը գտնուի Կարնոյ հիւսիային կողմը՝ համանուն գիւղին մէջ, որ ունի 50 տուն բնակիչ, 3 տունը միայն հայ եւ մնացեալը՝ թուրք: Վանքն անշուք վիճակի մէջ է հիմա: Վանահայրն է մշեցի Ներսէս Վարդապետը<sup>7</sup>:

Վանքին արտաքին երեւոյթն արդարեւ կը յիշեցնէ հայ հին վանքի մը ոճը: Հիմնարկութեան պարագաները թէեւ չեն որոշ, բայց զայն Մեծն Ներսէսի սարկաւազին՝ հաղայ անձին հետ կապելը, կարծեմ, սխալ կարծիք մը եղած չըլլար:

Վանքի դռնէն ներս մտնելով վարի բակին մէջ առաջին անգամ ուշադրութիւնդ կը գրաւէ 2 մեդր բարձրութեամբ խաչքար մը, որու վրայ կը կարդանք սա արձանագրութիւնը. «Ի թու. ՈՂԸ (698-1249) կանգնեցաւ խաչս ի յիշատակ տր. Թորոս որդի Երեւանա եպիսկոպոսի»<sup>8</sup>: Խաչքարին քով սանդուղք մը կայ, ուրկէ վեր բարձրանալով տաճարին առջեւ կ'ելնենք: Փոքր շէնք մըն է՝ պարզ ու անզարդ թէ՛ արտաքուստ եւ թէ՛ ներքուստ: Բակին մէջ կայ գերեզման մը, որու տապանագիրն է. «Այս է շիրիմ եւ դանբարան հրաւիրակի սբ. սաղիմեան սաբաբունի յոժ (= յոյժ) ցանկալի, եպիսկոպոս արք պանծալի, տր. Մարտիրոս պետ բաղձալի յանդրիանեանն պօլսեցի, կերտիապանս (= կերտի տապանս)

<sup>6</sup> Նկատի ունի Յովհ. Գազանճեանի «Բարբառախօսական նօթեր» յօդուածը, լոյս տեսած Բիւրակն լրագրի մէջ, Նոր շրջան, ԺՁ. տարի, թիւ 45-46, 3 Դեկտեմբեր 1898, էջ 785-788 եւ յաջորդ թիւր, էջ 818-822:

<sup>7</sup> Ներսէս վրդ. Տէր Սարգսեան, մականունանեալն «Թօսիկ վարդապետ»: Ծնած է Մուշ, 1837-ին եւ ձեռնադրուած 1868-ին, միաբան հաշկավանքի: Թէոդիկ այսպէս նկարագրած է անոր նահատակութիւնը 1915-ին «...Ուրսունամեայ այս նգնազգեաց նահապետի՛ն ալ չիւնայունեցաւ թուրանեան անիծապարտ երաշխէպը: Այլեւս փայլելու անկարող, բայց աղօթքը շրթունքէն անպակաս, անիկա փաշկոտուելով տարուեցաւ առկէփի մը եզերք՝ ուրկէ հայիւններով վար գորեցին զինք ոստիկաններ, մինչ իր գլուխը փաթեմ փաթեմ զարնուելով կը ջախջախուէր՝ ուղեղի պոռթկումներով: Մարմինը մնաց անթաղ՝ ամայի ձորին մէջ» (Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին, խմբագրեց Արայ Գալպաճեան, Նիւ Եորք, St. Vartan Press, 1985, էջ 166):

<sup>8</sup> Նոյն արձանագրութիւնը, տարբեր ընթերցումով տես՝ Հ. Ներսէս Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վեներաիկ, տպարան Սուրբ Ղազարի, 1864, էջ 81:

այս արգելի ձեռմար (= ձեռամբ) որդոյն իւր Գրիգորի եւ հոգեսուն իւր զաւակնի թվնի ՌՄԺԱ նի (1211-1762) յունվարի ԺԱ (11) նի»<sup>9</sup>:

Վանքին աղբիւրին վրայ գրուած է. «Ի տեսչութեան վանուցս հաշի Տիրատուրեան վարդապետի նորոգեցաւ աղբիւրս բարի ծախիւք Շահինե[ա]ն Յակոբի ի յիշատակ համայն իւրոց առ տ[է]ր փոխե[ա]լ բարի հոգւոց ի 1843 Օգոստ. 1 աստ»:

Վանքին դրան վրայ կը կարդանք սա արձանագրութիւնը. «Մտցես ի չ[իս] որդրմութեամբն Աստծոյ եւ օգնականութեամբ սրբոյ խաչի, աշխատութեամբ եւ ջանիւք Ղարայգեան Ստեփան վարդապետին, առաջնորդութեամբ հաշկա վանուց, շրջապատ պարիսպքն ի հիմանէն նորոգեալ շինեցաւ ոչխարիւք, խոյոք եւ այլօք ձեռնտըվութեամբ ե (= եւ) տրօք ազգիս հայոց ՌՄԼԸ (1238-1789)»:

Այս ընդօրինակութիւններուն ժամանակ վանահայրը մեզի հետ էր, ինքն ալ հետաքրքրութիւն մը կը զգար գիտնալու վանուցս հիմնարկութեան բուն թուականը: Վերի արձանագրութիւնը, որ 110 տարուան հնութիւն ունէր, շատ յետին էր եւ կը վերաբերէր վանքին այժմեան պարիսպներու հիմնարկութեան, վարդապետը հաստատեց անոր հնութիւնը՝ պատմելով հետեւեալը.

«Ասկէ 25 տարի առաջ, երբ ես նոր եկած էի հոս վանահայր, գիւղին մէջ ծեր թուրք կին մը կար, 100 տարեկան պառաւ մը, նա կը պատմէր, թէ իր փոքրութեանը սկսեք են շինել պարիսպները: Ես քեզ ըսեմ, հէմէն<sup>10</sup> 300 գործաւոր կ'աշխատէր, երեք խոշոր խազան<sup>11</sup> կերակուր կ'եփէին, եւ բոլոր գեղացիներն անկէ կը կերակրուին բանուորներուն հետ»:

Վանքի կառուցման բուն թուականը գտնելու համար շատ տեղ պտըտեցանք, բայց ի զուր: Խորանին դուրսի պատին վրայ եղած արձանագրութիւնը կարդալու համար սանդուխտով մը բարձրացանք ու կարդացինք սապէս. «Բարեխօսութեամբ Սբ. Ստեփաննոսի... Մարտիրոսեանց հասամի խանըմ»: Այս արձանագրութենէն – սրբատաշ մարմարէ խաչի քանդակի մը տակը փորագրուած – վեր կ'երեւային երկու կարմրագոյն քարեր, որոց վրայ նշմարեցինք այլեւայլ նշաններ՝ գիր կամ զարդ: Վանահայրն ըսաւ. «Վանքը 1200 տարի առաջ շինուած է յունաց թագաւորին աղջկան ձեռքով: Այդ քարերը նա դնել տուած է, վրայի գրերը հայու գիր է, բայց յունաց լեզու է»: Վանահօր ըսած այս խօսքերը լոկ ենթագրութիւններ էին, զորս կը շուայէր մեզի քննաբանօրէն: Մենք չկրցանք մօտէն դիտել այդ շահեկան քարերը:

<sup>9</sup> Նոյնը տես՝ Հ. Յակոբ Մ. Վ. Քօւեան, Բարձր Հայք, Բ. հատոր, էջ 42-43:

<sup>10</sup> Հէմէն (պրսկ.-թրք.) գրեթէ:

<sup>11</sup> Խազան (թրք.) կաթսայ:

Տաճարին մէջ՝ դրան քով, փոքրիկ խաչքար մը կար, ունէր հետեւեալ արձանագրութիւնը. «Սբ. խաչս բարեխօսու[թեամ]բ առ Ա[ստուա]ծ վա[սն] ազըցի խօջա Սրապիոնի եւ իւր ծնօղաց»։ Գաւիթը՝ ձախ խորանին քով դարձեալ խաչ մը հետեւեալը վրան. «Յիշատակ խաչս Մուրազին թվկ. ՌԲ (1002-1553)»։

Խաշկավանքի ամէնէն կարեւոր հնութիւնն է գերեզմանը, որ վանքին դիմացը, քիչ մը հեռու բլրակի մը կողին վրայ տարածուած է։ Ունի բազմաթիւ հին գերեզմանաքարեր՝ խաչքար, խոյքար եւ այլ տապանաքարեր։ Խաչքարերը թուով ութն են, 2ը կանգուն, 3ը ծուած, 1ը կոտրած, միւսը կիսով չափ թաղուած եւ ուրիշ մըն ալ երեսի վրայ ինկած։ Վերջինս ունի  $3^{1/2}$  մեդր երկայնութիւն ու  $1^{3/4}$  մեդր լայնութիւն, եզերքին վրայ գրուած էր հետեւեալը. «ՈՁԱ թու (681-1232) բազում փափաքանաւք եւ աւգնականութեամբ սբ. յարութեանս եւ սբ. նշանիւ եւ խաչս ասրախն սբ. եղբարս կանգնեցաւ պատուական խաչս եւ պահպանութեան(ն) աւետեցն առաջնորդ սբ. ուխտիս եւ եղբարց իւրոց Բարսղի եւ Գրիգորի եւ Արեւղին եւ Ա[ստուա]ծատ[ու]րի եւ ծնողաց Աղբայրցան եւ Սատուրին եւ քեոց իւրոց աղաչեմ, որք ընթեռնոյք, զգիրս մեղաց թողութիւն խնդրեցէք աւետե[ա]ցն ի Ք[րիստո]ս ե (եւ) զՄիսիթար յիշեցէք [ի] Ք[րիստո]ս»։ Նոյնին վրայ քիչ մը վար. «Վարպետ Տիրատուր անաակկերտ [այսպէս] վարդ արեւվ յիշեցէք ի Ք[րիստո]ս աղաչեմ»։ Ուրիշ խաչքարի մը վրայ. «Սբ նշանս Մարտիրոսի է ՌՁԸ (1088-1639)»։

Խոյքարները բազմաթիւ են, քանի մը հատին վրայ կան զանազան նկարներ, 1. Խոյին վզին վրայ արձանագրութիւն մը անընթեռնելի։ 2. Դարձեալ վզին վրայ՝ խաչի մը շուրջ. «Բարեխաւս է սբ. խաչս Խումար դպր (= դպիր) թվ ՌՇ (1500)»։ 3. Ուրիշ խոյքար մը, աջ երեսին վրայ առած շրջանակ մը։ 4. Աջ երեսը գիրք մը եւ ձախը փարջ մը։ 5. Ուրիշ մը հողին մէջ թաղուած։ 6. Աջ կողմը մարդ մը՝ թեւերը բացած, ձախ թեւին տակ աման մը եւ աջով խուփը բռնած։

Օրօրոցածէւ քարի մըն ալ ճակտին խաչ մը, ձախ կողմը ճոխ պատկեր մը, որուն ետեւ փոքր զարդապատկեր մըն ալ [կայ]։ Ուրիշ տապանաքար մըն ալ կայ, որուն վրայ նկարուած է խաչ մը շրջանակի մէջ առնուած։

Կարին

Արշակ

«Կարնոյ տեղագրութիւն» անուն տետրակէն պատահմամբ (20րդ էջն, ընդօրինակել տուինք)<sup>12</sup>։


<sup>12</sup> Այս հատուածը ընդօրինակուած է «Կարնոյ տեղագրութիւն» խորագրով տետրակէ մը, որ կը գտնուէր Կարնոյ Առաջնորդարանին մէջ։ Մէջբերուած հատուածը կը վերաբերէր Կարնոյ պարիսպին եւ ոչ՝ Խաշկավանքին։

Սղեոանդուլթեամբ անմիջապէս եղծել կու տայ խաչին ձեւը վրայէն<sup>13</sup>: 1859 թուոյն երկրաշարժէն այս որմը կործանեցաւ, եւ խաչքարն վար ընկաւ, որոյ վրայ այս երկու տառն մնացել էր. ՈՅ<sup>14</sup>, եթէ թուանշան համարուի, վեց հարիւր քառասուն ըսել է: Կ'ըսուի թէ այս խաչքարերն շորս հատ եղած են բերդին շորս դրան վրայ կանգնուած, երկուքն բոլորովին անյայտ էին, մէկն ալ Դեվրէզի<sup>15</sup> քով կանգնուած էր:


Երրորդ դուռն հարաւային կողմն է, որ կ'ըսուի Նոր դուռ (Եէնի գաբու)<sup>16</sup>:

Չորրորդ դուռն հիւսիսային կողմն է, կ'ըսուի Կուրճի դուռ<sup>17</sup>, սորա ներքին դրան բարաւորին վրայ մարդ մը հեծեալ ի ձին եւ երկու կողմը առիծներ քանդակուած էին, եւ եօթը քարի վրայ հետեւեալ արձանագրութիւնք փորագրուած են, որ մեծաւ աշխատութեամբ նոյն եւ նմանը օրինակեցինք:

Բուն արձանագրութեան նոյն եւ նմանն է տառերն եւ գրուածքն.



Նկ. 1. Կարնոյ բերդի յունարէն արձանագրութեան Տ. Թէվէլէեանի ընդօրինակութիւնը



Նկ. 2. Կարնոյ բերդի յունարէն արձանագրութեան Տ. Թէվէլէեանի ընդօրինակութիւնը

Վերոյիշեալ յունարէն գրուածքն արձանագրութեան բուն օրինակն է յունաց այժմեան գործածած գրերու ձեւով:

13 Խօսքը Կարնոյ կուսակալ Միսրի Ապտուրահման փաշայի մասին է: Դէպքը պատահած է հիւնդէրի 1216 (1797) թուականին: Կուսակալը եղծել տուած է «Կարմիր խաչ» անունով ծանօթ կարմրագոյն քարէ մարդաչափ խաչ մը (Չ. Յակոբ Մ. Վ. Քօւեան, Բարձր Հայք, Ա. հատոր, էջ 9):

14 Հայր Յակոբոս Մ. Վ. Քօւեան, իր հատորին մէջ կրկնած է հոս տրուած որոշ մանրամասնութիւնք, առանց յիշելու, որ այդ տեղեկութիւնները վերցուած են «Կարնոյ տեղագրութիւն» խորագրով տետրակէն (Չ. Յակոբ Մ. Վ. Քօւեան, Բարձր Հայք, Ա. հատոր, էջ 9):

15 Նկատի ունի Կարնոյ բերդին Դեվրէզի՝ Թարիզի դուռը, որ կը հայեր դէպի արեւելք (Չ. Յակոբ Մ. Վ. Քօւեան, Բարձր Հայք, էջ 9):

16 Դուռը կը հայեր դէպի հարաւ (Չ. Յակոբ Մ. Վ. Քօւեան, Բարձր Հայք, Ա. հատոր, էջ 10):

17 Կուրճի դուռ՝ Վրաստանի դուռ, որ կը հայեր դէպի հիւսիս (Չ. Յակոբ Մ. Վ. Քօւեան, Բարձր Հայք, Ա. հատոր, էջ 10):

1. Կէ պիսի [պոիթի] տօն ավուլօն [տուլօն] սու Ռօմանօն տօն տալասի-նո[ն] կէ կատէպանօ տէ սէքէնիայ [Սիվեռիա]:

Տէր օգնեա՛ ծառայի քո Ռօմանօսի (Տալասի[ն]օն) արշաւել Սիվէրիճի վրայ:

2. Եպոսթայ [Ի պօսթայ] թեու

Իսթեստու [Խրիստու] կիտեսի [ի խրիսի]

Թարգմանութիւն.

Շինեալ ոսկի դուռն Աստուծոյ<sup>18</sup>:

\* \* \*

**Բ. ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**

**Տեղեկագիր՝ Կարնոյ գիւղերու եւ անոնց եկեղեցիներու մասին**

*Կարնոյ շրջանի գիւղերի տեղեկագրական<sup>19</sup>*

*Ումուտում (հին Շահապիվան), ուր հին հայոց քրմապետներ կը նստէին:*

*Կարնոյ հիւսիս արեւմտեան կողմը, 3 ժամ հեռաւորութեան, օդը մաքուր, ջրառատ, հողը բարեբեր, առաջ 110 տուն հայ, 70 տուն թուրք, այժմ 38 անձ հայ, խառն՝ հայ, բողոքական, յոյն:*

*Ս. Յակոբ եկեղեցի, մնացել է որմերը եւ հիմը: Աջակողմեան որմին վրայ գեղեցիկ քանդակուած 3 խաչքարեր, որոնցից մէկը քառաթեւեան սիրուն թեւերով:*

*Եկեղեցւոյ դրան որմի վրայ գրուած է.*

*«Շինեցաւ Ս. եկեղեցիս այսմ գիւղիս բնակչաց տրօք եւ ջանիւք որոց փոխարէն Ա[ստուա]ծ բիւրապատիկ պարգեւեսցէ ի թուին 1874-ին»<sup>20</sup>:*

*Ամենափրկիչ մատուռ, եւս երեք հատ խաչքարեր ունի ու մէկ էլ քարից խորհրդաւոր ձեռք:*

*Մատուռին կից փոքրիկ խուց ճգնարան անունով:*

*Սբ. Սարգիս, մի քանի անգամ այրուած թուրքերից, այրուել է 1895 թ. կոտորածին, նորոգուել է 1903 (սիւնի վրայ կայ արձանագրութիւն այրուելու մասին):*

*Հիմը սրբատաշ քարերով մնում է կանգուն:*

<sup>18</sup> Հնու տրուած յունարէն արձանագրութիւնները իր ուղեւորութեան ընթացքին տեսած, ընդօրինակած եւ քարգմանած է Հ. **Ներսէս Սարգիսեան**, տե՛ս իր *Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս*, էջ 74: Հնո անոնք ընդօրինակուած են աղետուած ձեւով: Սխալագիր իւրաքանչիւր բառի կողքին, տրուած է Գոկոտ. Գոհար Մուսատեանի կողմէ ակեցուած անոր ճիշդ ընթերցումը: Ծնորհակալութիւն:


<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, ք. 26ա-30բ:

<sup>20</sup> Նոյնը տես՝ Հ. **Յակոբ Մ. Վ. Քօւտեան**, *Բարձր Հայք*, Բ. հատոր, էջ 67-68:

եկեղեցին արտաքուստ շրջապատ է:

Ունեցել է կանոնաւոր դպրոցի շէնք, Մոսկուայի կոմիտէի<sup>21</sup> աջակցութեամբ դպրոց ունի այժմ:

Գիւղն ունի երկու գերեզմանոց՝ հին եւ նոր: Հնի մէջ կան խոյի արձանատապաններ- սրեր, և այլն, որոնց գլուխները դարձրած են դէպ արեւմուտք, հաւանականօրէն կռապաշտական շրջանի գործ: Նոյն գերեզմանատան մէջ կան նաեւ 11 հատ խաչքարեր հին եւ գեղեցիկ, առանց թուականի բացի մէկից, որն հետեւեալն է.



Մրանից գատ կան նաեւ 11 խոյատապաններ՝ սրի քանդակներով:

Սոյն գերեզմանոցին կից հարաւ արեւելք, ճանապարհի վրայ մի մեծ խաչքար եւս կայ հայկական գրերով – բայց անընթեռնելի – որի շարունակութեան վրայ թուրքերի գերեզմանոցն է:

Ումուտում անունը յետոյ պիտի ստացած լինի. բոլոր նշաններով երեւում է, որ զուտ հայկական գիւղ է եղել, տեղական բարքերն աւանդաբար կը պատմեն, թէ Կարնոյ եւ իւր դաշտի մէջ 7 տարի խիստ ցուրտ եւ ձիւնաբեր լինելով, բուսականութիւնը կը դադրի, ժողովուրդը սովի եւ ցրտի եղանակի խստութիւնով կը կոտորուի: Սուլթաններից մէկը երբ անձամբ կը շրջի Կարնոյ նահանգը...<sup>22</sup> երբ Կարնոյ Դվնիկ գիւղը կը գայ, այնտեղ ապրող մի յոյն քահանայից կը հարցնէ, թէ այս մօտիկ գեղում բնակչութիւն մնացա՞ծ է... յոյն կրօնաւորն ասում է. «Ումուտ էտէրիմ քի օրատա պիր թիւթալի չըգար...» – «Յոյս ունիմ, որ այն

<sup>21</sup> Մոսկուայի կոմիտէն կազմուած էր Մոսկուայի մեծահարուստ հայերուն կողմէ եւ նիւթապէս օժանդակած է ցեղասպանութիւնը վերապրող հայութեան: Ան Կարնոյ մէջ ունեցած է որբանոց-դպրոց մը, գաղթականներու ընդունելութեան կայան, հիւանդանոց և այլն (**Ղազար-Չարզ**, Յուշամատենի Բարձր Հայքի. Կարինապատում, Պէյրութ, տպարան Մշակ, 1957, էջ 499):

<sup>22</sup> Այս եւ յաջորդ բազմակէտերը բնագրինն են:

գիւղը բուխերիկ մը կը ծխի»։ Եւ իրօք սուլթանն անձամբ գալով այդ գիւղը կը գտնէ՝ մէկ տան մէջ 11 անձ նստած աղօթք են անում, սուլթանը հրաման է անում՝ գիւղի անուն Ումուտում դնել եւ այդ մարդոց գեղեր նուիրել (նուիրած գեղերն Քերօլ, Խոլանիս, Խարման Թարլա, Խամլար, Չամլի, Փորանիս, Բաղնիք եւ Ումուտում)։

Նոյն 11 անձանց մահուանէ ետք այդ տեղ ուխտատեղի կը դառնայ (արտավայր), յետոյ թուրքերն այդ տեղը մզկիթ են շինել, որ այժմ էլ կանգուն է։

Դերջանի հաշ գիւղից այստեղ գաղթած վերջին անցքերից ոմն տիկին Նարգիզ Մարտիրոսեանի մօտ կայ մի ձեռագիր՝ Կարմիր Աւետարան եւ սրբոց մասունք, որ իւր պապերից է ժառանգաբար մնացել. Գրուած է. «Յիշատակ է սուրբ նշանս Սահակին, կողակցին Մանուշակին, ծնողացն Յովհաննէսին, Սալամին ի թուին Ռճիթ (1129) [1680] ի ձեռն Գրիգոր վարդապետին»։

Մի քանի մասունքներ անունն է «Ս. Նշան», խաչին վրայ կարմիր եւ սպիտակ քարերով զարդարուած։

Աւետարանի յիշատակարանները.

«Նորոգեցաւ Սբ. Աւետարանս ի յերկիրն Խորձենք, որ Կեղի կոչի, ընդ հովանեաւ Սբ. Սարգսի, ձեռամբ սուտ անուն Գասպարի, ի թուին ՌՂԲ (1092) [1643]. ով եղբայրք, ով ոք հանդիպիք սմին, յիշեցէք գեղկելի գծողս, որ բազում աշխատանս կրեցի, եւ զծնաւզս իմ եւ զամենայն արեան մերձաւորս ամէն»<sup>23</sup>։

«Տէր Ա[ստուա]ծ, ողորմեա ստացողի սորա պատուական քահանայի ներսեաի եւ ծնողաց իւրոց, ընդ նոսին եւ ինձ անարժան գրողի Թորոսի ամէն»<sup>24</sup>։

«Տէր Ա[ստուա]ծ, ողորմի ըստացողի սորին Գիրգորոյն եւ Խուսային, որ ետ սա յիշատակ ինձ Մարտիրոս երիցուս, զոր Տէր Ա[ստուա]ծ վայելել տացէ»<sup>25</sup>։

Ինչպէս մասունքներն, այնպէս եւ Կարմիր Աւետարանն այս կիրն փախստի ժամանակ հետն է վերցրել, սարէ սար պտտեցրել եւ ազատել կորստից իւր գերդաստանի սրբութիւն յիշատակները։

<sup>23</sup> Այս ձեռագիրը այժմ կը պահուի Մատենադարանի մէջ, թիւ 9026: Այն ժ. դարու գրչութիւն է (Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Բ., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթափյան, Երեւան, 1970, էջ 856): Մատենադարան մտնի գործած է 1940-ին, բերուելով Եղեգնաձորի Միկոյեան գիւղէն (նոյն, Ա. հատոր, Երեւան, 1965, էջ 142-143): Այս յիշատակարանը տպագրուած է հետեւեալ հատորին մէջ. Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ., հատոր Գ., կազմեց՝ Վազգեն Հակոբյան, Երեւան, 1984, էջ 113: Յիշատակարանը կը գտնուի ձեռագրի 201ա թերթին:

<sup>24</sup> Յիշատակարանը կը գտնուի ձեռագրի 154բ թերթին: Տպագրուած է հետեւեալ հատորին մէջ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., աշխատասիրութեամբ՝ Ա. Ս. Մաթևոսյանի, ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան, 1988, էջ 321:

<sup>25</sup> Կը գտնուի ձեռագրի 154բ թերթին: Հոս տրուածը յիշատակարանի առաջին մասն է միայն:



**Էրկրնիստ:** Ումուտումից արեւմուտ, մէկ ժամ ճանապարհ, ջրառատ, դիրքը լաւ, ժամանակին կը պատկանէր Արծն (այժմին Խարազ) քաղաքին՝ իբրեւ իշխանների գբօսատեղի:

Զուտ հայկական գիւղ, բայց 1872 թուից թուրքեր եւս բնակուեցին, այժմ խառն են ապրում հայերը եւ թուրքերը:

Ունին Ս. Աստուածածին եկեղեցին՝ ուսական զինուորների մթերանոցի վերածուած:

Հողերն արգաւանդ եւ բերրի:

Եկեղեցույ որմերուն մէջ կան 7 հատ խաչքարեր առանց թուականի:

Ինչպէս այս, նոյնպէս եւ Լղտաձորը, Գոմքը, Խաչկավանք գիւղերը պատկանելիս են եղել Արծն քաղաքի մէջ ապրող Աղջաղըզ անունով հայ իշխանագուն աղջկայ:

Գիւղն ունի հին գերեզմանոց, որի մէջ 4 հատ խոյատապաններ, 2 հատ մեծ խաչքարեր հայկական գրերով, որոնք անընթեռնլի են, ուշագրաւ է խաչքարերի շուրջի ծաղկանկարները, որ բաւական գեղարուեստական են:

**Լղտաձոր:** Երկնիստից հիւսիս արեւմուտ կէս ժամ հեռաւորութեամբ:

Զուտ հայկական գիւղ, 1872 թուին թուրքեր եւս բնակութիւն են հաստատել, 1914 թ. հայերի թիւը 1201 անձ, իսկ թրքերինը 250 անձ, իսկ այժմ 101 անձ հայ, Ռուսաստանում 200 անձ, իսկ թուրքերի թիւը 100 անձ:

Գիւղը բարձր դիրք ունի Կարնոյ դաշտից, լեռան ստորոտից բղխում է պաղ եւ առողջարար ջուր, նշանաւոր իւր Կարմրախայտ ձկներով:

Հողերը ջրարբի եւ արգաւանդ (գետնախնձոր, կաղամբ, և այլն):

Մբ. Յակոբ եկեղեցի, որի որմի վրայ գետեղուած է խաչքար երկու աւազանով. «Յիշատակ է այս դուռս քարաշէնքն Ս. Յակոբայ կամովին տիրացու Մելքոնին, կողակցին հանգուցեալի, Հոռոմին ընտանեանց 1 Կ Կ 26»:

Կայ Խաչելոյս կոչուած մատուռ, որի արեւելեան խորանին, որմի մէջ գետեղուած է մեծ խաչքար, պատուանդանի վրայ հայերէն տառերի հետքեր:

**Օրթուգի:** Դէպի արեւմուտք Լղտաձորից 1/2 ժամ հեռու, առաջ զուտ հայաբնակ, յետոյ խառն, այժմ թրքաբնակ, 220 անձ թուրք, կայ փլած եկեղեցի, խաչքարերով մի հին գերեզմանոց, 10 խոյատապան գերեզմաններով:

<sup>26</sup> Հիմերդի 1267 ք.՝ 5 նոյեմբեր 1850-25 հոկտեմբեր 1851: Նոյն արձանագրութիւնը, չնչին տարբերութիւններով, տե՛ս նաեւ Հ. Յակոբ Մ. Վ. Քօսեան, Բարձր Հայք, Բ. հատոր, էջ 39:

Հոս ոմն Նինէի տանն է եղել Շէկ Աւետարանը<sup>27</sup>, որն այժմ փոխադրուած է հոտորաշէն գիւղը (Ախալքալաք), 1878 թ. գաղթի ժամանակ:

**հաշկավանք:** Երկնիստէն հիւսիս 20 վայրկեան հեռաւորութեան վրայ, զուտ հայաբնակ է եղել, 1860 թ. թուրքեր եւս բնակուել են, 1914 թ. հայերի թիւը 235 անձ, թուրքեր 175, այժմ հայեր 6 անձ, 80 անձ էլ Ռուսաստանում, թուրք 30 անձ:

Հողը բարեբեր եւ ջրարբի:

Ունի հաշկավանք անունով եկեղեցի (իբր թէ 1700 տարուայ)<sup>28</sup> հնութիւն է, յիշատակարան ունի աւագ սեղանի արտաքին պատի վրայ յունական գրերով (գրուած 330 թ., տակաւին հայ տառերը չէին գտնուած)<sup>29</sup>, որմին արտաքին կողմը կայ Երուսաղէմի հրաւիրակ եպիսկոպոսի տապանը հայ գրերով. «Երուսաղէմի հրաւիրակ ... Եպս. ամի ՌՄԺԱ [1762] յունվ[ա]ր 11ին»<sup>30</sup>: Յիշատակարանի գրերը չեն կարդացուում կոտորուած լինելուն պատճառով: Եկեղեցին կանգուն է դեռ, բարձր դիրքով, սրբատաշ քարերով:

Կայ մի սրբատեղի եւս՝ լերան վերեւի մասում, «Խաչափայտ» անունով, ջրի աւազանով, քարէ աւազան, ցոյց չի տալիս իւր մէջ թափուող ջրի շարժում (Ս. Յակոբայ աղբիւրի պէս), այդ աղբիւրը կամ աւազանը պաշտամունքի տեղ է, ասում են, որ 6-րդ դարում, Միքայէլ կայսրը Փրկչի Խաչափայտը գերութիւնից ազատելով տարած էր Բիւզանդիա, մի ինչ որ վտանգի պատճառով ստիպուած թաղեց խաչափայտը հոս հողի մէջ, եւ երբ նորից հանեց խաչափայտը, հետը միասին նաեւ բղխեց այս աղբիւրը, գուցէ խաչափայտի լեռներն էլ իրենց անունն այստեղից են առել, իսկ վանքը՝ Սուրբ հաշ Վանք: Ժողովուրդը այդ ջուրը գործ է ածում իբրեւ դեղ՝ մարմնոյ եւ հոգու արատներից բժշկուելու համար:

Ջուրն այնքան առատ է բղխում, որ ներքեւում բաւական մեծ գետակ է կազմում ու հանդարտ խոռխոջելով իջնում է ծաղիկների եւ խոտերի գուրջերով ծածկուած լանջերից, ընդունելով իր մէջ ուրիշ բազմաթիւ աղբիւրներ,

<sup>27</sup> Առկայ են «Շէկ Աւետարան» անունով ճանչցուած քանի մը աւետարաններ: Հրաչեայ Աճառեան, որ կազմած է Կարնոյ Սանասարեան վարժարանի ձեռագիրներու ցուցակը, Կարնոյ մէջ տեսած է նոյնանուն աւետարան մը՝ «...Ուրիշ հայու մը քով կայ բաւական հին աւետարան մը՝ որ հանրաժանօք է Կարնոյ մէջ Շէկ Աւետարան անունով. այս աւետարանը սուրբ համարուած է եւ շատե՛ր անձ ուխտի կ'երթան. ինչպէս որ ես ես ուխտի գացած եւ ցուցակագրած եմ...» (Յուշակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարին, կազմեց՝ **Հրաչեայ Յ. Աճառեան**, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1900, էջ ԺԿ): Նոյն ձեռագրին Աճառեանի նկարագրութիւնը, որքան ծանօթ է մեզի, չէ հրատարակուած:

<sup>28</sup> Փաստաթուղթին մէջ այս նախադասութեան կողմին գրուած է «ստուգել»:

<sup>29</sup> Փաստաթուղթին մէջ այս նախադասութեան կողմին գրուած է «ստուգել»:

<sup>30</sup> Նոյն արձանագրութիւնը ամբողջական տեսքով տրուեցաւ վերեւ, առաջին փաստաթուղթին մէջ:

հանդարտ ու դանդաղ իջնում է Կարնոյ դաշտը, ուր լճանում եւ ճահիճներ է կազմում «Շամբ Կարնոյ» կոչուելով (Պատմութիւն հայոց Լէօի, էջ 54)<sup>31</sup>:

**Գոմք:** Երկնիստի հարաւ, դաշտին մէջ, հին հայկական գիւղ: 1875 թ. թուրքերը եւս բնակեցան, 1914 թ. հայերի թիւը 480 անձ, թուրքեր 250 անձ, կոտորածից մնացել է 2 անձ, Ռուսաստանում 40 անձ: Այժմ բոլորովին աւերակ, հողը բարեբեր, եկեղեցին փլած է, հին գերեզմանատան կան խոյստապանաքարեր:

**Գրիչք-Կիրիչք:** Երկնիստից հարաւ արեւելք մի ժամ հեռաւորութեան: Հայկական է եղել, 1875 թ. թուրքեր եւս բնակակից: 1914 թ. հայեր կային 650 անձ, թուրքեր 100 անձ:

Այժմ 54 անձ հայ, 200 էլ ազատած Ռուսաստանում են, 5 անձ էլ նոր գաղթական, իսկ թուրքեր 12 անձ:

Սեւահող ու գորաւոր ու ջրարբի:

Եկեղեցւոյ անունն է Սուրբ Թագաւոր, որից միայն պատերն են մնացել, եկեղեցւոյ փայտերը քանդել եւ ի վաճառ են հանել, եկեղեցւոյ դրան վրայ խաչքար կայ ՌՄՀՆ (1275) [1826]: 12 պատուհան ունի եկեղեցին չորս կողմից, հին գերեզմանոց, ուր կան 7 հատ նշանաւոր խաչքարեր, որոնք ընդհանուր առմամբ կոչւում են Հազամարի սուրբ, կից նոր գերեզմանոցին: Գրիչք անուան մասին յիշում են, թէ յատկացուած է եղել դպիրներին, այսինքն գրողներուն կամ մտաւորականներուն Արծն քաղաքի իշխանազունների կողմից:

**Բագկառիճ:** Հայկական գիւղ, բայց հայերը գաղթեցուած, եկեղեցին մզկիթի վերածուած, հայոց գերեզմանատան կան խաչքարեր, 16 անձ թուրք կայ այժմ:

**Արջոնք:** Հայկական գիւղ, 1878 թ. գաղթեցին եւ նրանց տեղը բռնեցին թուրքերը՝ 65 անձ, հայկական հետքեր չեն մնացել բացի մի գերեզմանոցից, ուր քիչ թէ շատ հետքեր կան ըստ ասութեան: Հոս գեղի տեղն խիստ խիտ անտառ է եղել եւ պատկանելիս է եղել Նոր Շենկա: Այն խիտ անտառում արջեր կը բնակուէին եւ կը վնասէին մարդոց, անտառը ոչնչացրին եւ Արջոնք անունով գիւղ հիմնեցին:

<sup>31</sup> Նկատի ունի հետեւեալ հատորը՝ Լէօ, Հայոց պատմութիւն, հատոր առաջին՝ Հին պատմութիւն, հրատարակութիւն Գասպար Յ. Տէր-Մարգարեանի, Թիֆլիս, տպարան «Սլովո», 1917: Տեղեկութիւնը էջ 139 եւ ոչ՝ 54:

**Գեղախոս:** Ումուտումից հարաւ 20 վայրկեան, զուտ հայկական գիւղ եւ կը պատկանէր Ումուտումի տէրերին, այժմ իսկ հողերը – թէեւ թուրքերու ձեռքն է – բայց կոչոււմ են Ումուտումի տէրերի անունով:

1914 թ. հայերու թիւը 600 անձ, իսկ թուրքերին 180 անձ (թուրքերը եկած են 1870 թ.), իսկ այժմ հայեր 8 անձ, 25 Ռուսաստանում, 75 անձ էլ գաղթական նոր, 70 անձ էլ թուրքեր են:

Հողը բարեբեր եւ ջրառատ:

Ս. Աստուածածին եկեղեցի<sup>32</sup>, քիչ վնասուած, առանց սեղանի, աջակողմեան սիւնի վրայ գետեղուած է Պետրոսի սուրբ հաշը թւին ՌՃ (1100) [1651], առաջին քարի կողին վրայ արձանագրուած է 3 խաչեր եւ յիշատակարանները գրուած է հայ փակագրերով, խիստ ուշագրաւ են հնութեամբ եւ գեղարուեստականութեամբ, իսկ մարմարիոնի քառակուսի մի քարի վրայ գրուած է. «Եմ ի տապանի լուղուզար Ս. Ա[ստուա]ծ[ածին] եկեղեցւոյ աւագ քահանայ Տէր Ղուկասի որդի Տէր Մկրտիչս, ընթերցողացդ ողորմեա հայցեմ, թվին ՌՄԾ (1250) [1801]<sup>33</sup>»: Եկեղեցւոյ արեւելեան պատին գետեղուած են տասը հատ խաչքարեր որմերուն մէջ: Դրան վրայի արձանագրութիւնը անընթեռնելի է:

**Կրճնկոս**<sup>34</sup>: Հայկական գիւղ, 1914 թ. հայեր 360 անձ, իսկ թուրքեր 15 անձ, այժմ 25 անձ տեղս, 30 անձ Ռուսաստան, եւ 6 անձ էլ գաղթական, թուրք չկայ:

Հողը բարեբեր եւ ջրառատ:

Եկեղեցին է Ս. Աստուածածին, ունեցել է դպրոց, եկեղեցւոյ աջակողմեան սեան մէջ կայ երկու հատ խաչքարեր: Բեմի առջեւի հնաքարին վրայ կայ երկու հատ ծաղկանկարներով խաչքարեր, աւագանի վրայ գետեղուած է երկու մարմարիոնէ խաչքարեր գեղանկարներով, որոց մէկի տակը գրուած է «Յիշատակ է ս. խաչերս վարդեցի տիրացու ... ..» անընթեռնելի է:

<sup>32</sup> Ըստ այլ աղբիւրներու, եկեղեցին կոչուած է Ս. Սարգիս (Հ. Ս. Էփրիկեան, Պատկերագարդ բնաշխարհիկ բառարան, հատոր առաջին, գիրք Ա., Բ. տպագրութիւն, Վենետիկ, Ս. Ղազար, 1903, էջ 503, Թւորիկ, Գողգոթա, էջ 169, Հ. Յակոբ Մ. Վ. Քօսեան, Բարձր Հայք, Բ. հատոր, էջ 63, ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 142, ք. 39ա):

<sup>33</sup> Ընդգծումը՝ հեղինակին: Քօսեան այս արձանագրութիւնը տուած է այսպէս.

«Եմ ի տապանիս ողոգ

Սբ Ածածնայ եկեղե

ցոյ աւագ Բահանյ

Տր Ղուկասի որդի. Տր

Մկրտիչս. ընթերցո

ղացդ ողորմիս այ

ցեմ. քովին ՌՄԾ» (Հ. Յակոբ Մ. Վ. Քօսեան, Բարձր Հայք, Բ. հատոր, էջ 63-64):

<sup>34</sup> Կրճնկոս՝ գրաւոր աղբիւրներու մէջ յիշատակուած է առաւելաբար «Կրճնկոց» ձեւով:

Այս եկեղեցին փայտաշէն է, ուստի զօրքերը ախոռի վերածած են, դրան ներսի կողմը մարմարիոնի խաչքար կայ ՌՄ թվ. (1200) [1751]:

Եկեղեցւոյ շինութեան թուական սեան վրայ գրուած է 1884 թ. Դեկտ. 7: Եկեղեցւոյ դրսի որմին մէջ գետեղուած է գերեզման խոյ մը:

**Միւլք:** Հայկական գիւղ: Պասկեւիչի<sup>35</sup> ժամանակ հիմնովին գաղթած, այժմ թուրքեր կը բնակին 150 անձ:

Հին հայոց գերեզմանոցն է մնացել՝ խոյատապանաքարեր եւ երկու խաչքարեր, հայ տառերի հետքեր...:

**Դըվնիկ:** Զուտ հայկական, 1914 թ. ունէր 1675 անձ հայ եւ 100 թուրք, այժմ 48 անձ հայ, 100 հայ Ռուսաստան եւ մօտ 15 անձ թուրք բնակած 1895 թ.:

Ունին երկու քահանայ, Տէր Վահան Ուրուշանեան<sup>36</sup> եւ Տէր Թորգոմ էհրամձեան<sup>37</sup>, որոնք սպանուած են 1914 թ. կոտորածին<sup>38</sup>: Եկեղեցին Մայր Աստուածածին, ունին ուսումնարան, եկեղեցին քանդուած է թուրքերի կողմից, եկեղեցւոյ աւազանին կան խաչքարեր, եկեղեցւոյ աջ կողմի որմի տակ գետեղուած են մարմարեայ խաչքար՝ երեք խաչ մի պատուանդանով եւ մի քիչ ներքեւ երկու փոքր խաչեր՝ «Յիշատակ է ս. խաչս Սահակի եւ ամենայն զարմին ՌՃԳ (1103) [1654]:

Մի վանք եւս կայ՝ դրան ճակտին մի խաչքար, շինութեան թուականն է 1861: Վանքի դրան երկու կողմերը երկու մեծ խաչքարեր, վանքի գերեզմանոցին մէջ կարմիր քարով մի հին խաչքար կայ, երկու խաչքար եւս առանձին:

Գիւղի արեւմտեան կողմը եւս կան բազմաթիւ խաչքարեր: Նշանաւոր է Ա. Գէորգայ խաչքար կոչուածը, որ 3 մեդր բարձրութիւն եւ 2 մեդր լայնութիւն ունի, գեղարուեստական ծաղիկով, մի այլ խաչքարի վրայ գրուած է ներսէս Մխիթար, 876 թ. հայոց (ՊՀԶ) [1427]<sup>39</sup>, նաեւ Կարմիր հաշ անունով խաչքար: Ըստ երեւոյթի, եկեղեցւոյ տեղեր են եղել: Այս գիւղը ըստ երեւոյթի 7 եկեղեցի է ունեցել:

<sup>35</sup> Նկատի ունի ուստի զօրավար Իվան Պասկեւիչի ղեկավարութեամբ 1828-1829 թ. ուստի-քրքական պատերազմի աւարտին, ուսական բանակի նահանջին հետ Կարնոյ շրջանի հայութեան գաղթը դէպի Ալեքսանդրապոլ (Կիւմրի), Ախալցխա, Ախալքալաք եւ արեւելեան այլ շրջաններ:

<sup>36</sup> Ըստ Թէոդիկի՝ Ռուշանեան: Ծնած է 1858-ին, ֆահանայ ձեռնադրուած 1898-ին (Թէոդիկ, Գողգոթա, էջ 168): Քօսեան զինք կոչած է Ուշանեան (Հ. Յակոբ Մ. Վ. Քօսեան, Բարձր Հայք, Բ. հատոր, էջ 28):

<sup>37</sup> Ծնած է 1860-ին, ֆահանայ ձեռնադրուած 1910-ին (Թէոդիկ, Գողգոթա, էջ 168): Քօսեան զինք կոչած է Զուխլայեան (Հ. Յակոբ Մ. Վ. Քօսեան, Բարձր Հայք, Բ. հատոր, էջ 28):

<sup>38</sup> Հոս եւ արեւի վար ֆահանաներու սպաննութեան թուական նշուած է 1914 փոխան՝ 1915-ի:

<sup>39</sup> Ըստ Քօսեանի, այս արձանագրութիւն ունի այսպիսի բովանդակութիւն. «ԹՎ ռ ե ուրի աս կա եւ պաի»

«Մը նշանն է բարէխօս

Մխիթարա եւ Ներսիսի» (Հ. Յակոբ Մ. Վ. Քօսեան, Բարձր Հայք, Բ. հատոր, էջ 30):

**Պատիշէն:** Հայկական: Եփրատի հեղին վրայ: 1914 թ. 700 հայ անձ, թուրք 45 անձ, այժմ 35 [հայ] անձ, 130 Ռուսաստան, 4 անձ գաղթական, իսկ 25 անձ թուրք: Զրառատ եւ բարեբեր: Եկեղեցին Ս. Գէորգ անունով, Ս. Շմաւոն անուն մի մատուռ, երկու քահանաներ Տէր Տաճատ Քէշիշեան<sup>40</sup> (սպաննուած 14 թ.): Եկեղեցին կանգուն է, իսկ դպրոցը քանդուած: Եկեղեցւոյ որմերու վրայ 4 հատ խաչքարեր կան, մէկի վրայ գրուած Ս. Յակոբայ խաչ, սիւներից մէկի վրայ գրուած է 1770 (1275)<sup>41</sup>:

**Օձնի:** Օհան Օձնեցու հայրենիքը: 1914 թ. 2600 անձ հայ, թուրքեր 80 անձ, այժմ 124 [հայ] անձ, 100 անձ Ռուսաստան, 102 նոր գաղթական, իսկ թուրքեր 25 անձ:

Եկեղեցին Մայր Աստուածածին, մի վանք Օհան Օձնեցու անունով, որ այժմ քանդուած է թուրքերի կողմից, ամայացած: Երեք քահանայ՝ Տէր Մինաս Պալանեան<sup>42</sup>, Տէր Արիստակէս Սուղպաթեան<sup>43</sup> եւ Տէր Վրթանէս Տէր Յարութիւնեան<sup>44</sup>: 14 թ. երեքն էլ սպանուած:

Օհան Օձնեցու գերեզմանի վրայ խաչքար առանց յիշատակութեան:

Եկեղեցւոյ միջի մատուռին կայ գրութիւն.

«1858 յանուն Օձնեցի տեառն Յօհաննու սբ. հայրապետի՝ ի յաջ նորաշէն այս եկեղեցւոյ Ս. Աստուածածնի նորոգ ի հիմանց այս ս. մատուռն գեղեցիկ, շինի եւ խաչքար նորին օծեղ հրաշագործ աստ փոխադրի ձեռնտու դուռ շինութեան սորին, իսկ սրբոյ մատրան Չմշկածագցի վեհագգի Պօղոս իշխան Խարաճեան

<sup>40</sup> Ծնած է 1867-ին եւ ձեռնադրուած 1891-ին (**Թէոդիկ**, *Գողգոթա*, էջ 169):

<sup>41</sup> Հիմնադրի 1275 թ.՝ 10 Օգոստոս 1858-29 Յուլիս 1859:


<sup>42</sup> Թէոդիկ եւ Հայր Քօսեան, որպէս Օձնի գիւղի ֆահանսներ, յիշած են յաջորդ երկու ֆահանսները միայն, իսկ Տէր Մինաս Պալանեանը չեն յիշած (**Թէոդիկ**, *Գողգոթա*, էջ 167-168, **Հ. Յակոբ Մ. Վ. Քօսեան**, *Բարձր Հայք*, Բ. հատոր, էջ 20):

<sup>43</sup> Ըստ Թէոդիկի՝ Սուղպաթեան, իսկ ըստ Հայր Քօսեանի՝ Սուղպաթեան: Ծնած է 1860-ին, ֆահանայ ձեռնադրուած 1888-ին: 1915-ին եղած է Կարնոյ դաշտի 45 նահատակ ֆահանսներու եւ 6 վարդապետներու առաջին զոհը: Թէոդիկ այսպէս նկարագրած է անոր նահատակութիւնը. «Տեղահանութեան նախընթացին, հրոսպետ ծաֆէր, հրէշային հաճոյքի մը համար, գիւղէն դուրս կը ֆաշէ եւ բաց անդաստանին մէջ կը զենու ոչխարի նման...» (**Թէոդիկ**, *Գողգոթա*, էջ 167):

Աւարտած է Կարնոյ Կարմիր վանքի ժառանգաւորաց վարժարանը: Եղած է Կարնոյ դաշտի գիւղերու կրթական գործի կազմակերպիչներէն մէկը ու միշտ փայլած իր կազմակերպչական կարողութիւններով: Անդամակցած է Կարնոյ Կրօնական ժողովին: Սպաննուած է Կառավարութեան եւ անձամբ Պէհախտոնի Շաֆիւրի հրահանգով (**Ղազար-Չարզ**, *Յուշամատեան Բարձր Հայքի. Կարինապատոււմ*, էջ 649-650, **Հ. Յակոբ Մ. Վ. Քօսեան**, *Բարձր Հայք*, Բ. հատոր, էջ 20):

<sup>44</sup> Ծնած է 1862-ին, ֆահանայ ձեռնադրուած է 1888-ին (**Թէոդիկ**, *Գողգոթա*, էջ 168):

իւր իսկ արդեամբ ի փառս Ա[ստուծոյ] պաշտելի անուան եւ ի փրկութիւն ննջեցելոցն համօրէն իւր տան»<sup>45</sup>:



### Յիշատակի պատկեր ծաղկեփնջերով

Նրանց դիմաց երեք հատ խաչքարեր, մին եւս երեք հատ խաչ քարեր:  
Գերեզմանի խոյերը եւ խաչքարերը կոտորուած են թուրքերի կողմից:

**Թարգունի (Գա Արքունի):** Զուտ հայկական: 1880 թուին թուրքեր եւս [բնակած են], 1914 թ. հայերի թիւն էր 1025 անձ, իսկ թուրքեր 35 անձ:

Այժմ հայեր 70 անձ, Ռուսաստան 9 անձ, 12 անձ նոր գաղթական, թուրք չկայ:

Հողը բերրի ու ջրարբի:

Եկեղեցին՝ Մայր Աստուածածին, այժմ քանդուած, դպրոցը քանդուած:  
Սուրբ Թագուհի սրբատեղի, որ մատուռ է, քանդուած վեց հատ խաչքարերով:

Մեծ եկեղեցին այրած, անկիւնը խիստ մեծ խաչքար առանց յիշատակարանի, եկեղեցին եւ դուռը նորոգուած 1887 թ. «Նորոգեցաւ դուռս այս Թարգունի գիւղի նորաշէն եկեղեցւոյ ի յիշատակ Քթոյեան Նազարէթին եւ եղբօրն հանգուցեալ Մովսէսին եւ սորա կնոջն Հռիփսիմէին եւ դստեր սորին հանգուցեալ Մարգարտին 1887 15-ի նոյեմբերին»:

Մէկ խաչքար աւազանին մէջը: Մէկ խաչքար բեմի ճակտին, մէկ խաչքար հարաւային պատին ու մէկ խաչքար հիւսիսային պատին վրայ: Երկու խաչքար

<sup>45</sup> Նոյն արձանագրութիւնը տրուած է նաեւ Հայր Քօստանի մօտ (Հ. Յակոբ Մ. Վ. Քօստան, Բարձր Հայք, Բ. հատոր, էջ 21):

հարաւային պատին մէջ, երկու խաչքար արեւմտեան որմին վրայ: Ըստ աւանդութեան, Թարգունին ժամանակին Արծն քաղաքին կպատկանէր (այժմ Խարազ գիւղ), փողերանոցն եղած է: Սբ. Թագունհի սրբատեղին եւս եկեղեցի շինուած է Արծնի թագունոյն անուամբ:

**Նոր Շէն:** Թուրքերը բնակութիւն են հաստատել 1880 թ.: 1914 թ. 750 հայ անձ, թուրքեր 200 անձ, այժմ հայեր 22 անձ, 6 նոր գաղթական եւ 50 անձ էլ Ռուսաստան: Թուրքեր 25 անձ:

Տեղն ու դիրքը լաւ ամառանոցի տեղ, ջրարբի եւ բարեբեր:

Ս. Յակոբ եկեղեցի, Ներսէսեան դպրոց: Դպրոցը քանդուած է այժմ: Եկեղեցւոյ դրան աջ կողմը որմի մէջ խաչքար ՌՅԱ. (1301) [1852]: Մի խաչքար եկեղեցւոյ դրան աջ կողմը նկարով, մի խաչքար էլ ձախ կողմը, Լուսաւորչի խորանին որմին մէջ հին խաչքար հայկական փակագրերով, երկու խոյրու քարեր ձախակողմի որմին արտաքին եւ ներքին կողմերը գետեղուած են որմի մէջ, գլուխները դուրսը... դրսի որմի աջակողմեան անկիւնը երկու մեղր երկայնութեամբ եւ մէկ մեղր լայնութեամբ կայ մի խաչքար, որի մի կողմը ձիաւոր մը, միւս կողմը թեւեր վեր բացած մարդ մը կամ հրեշտակ նկարուած...: Ս. Յակոբ անունով կիսաքանդ մատուռ մը եւս կայ գիւղի մօտ: Ունին երեք գերեզմանոց:

Ունին կաթնաղբիւր մի ուխտատեղի գիւղի հարաւային մասում, բազմաթիւ ակունքներով պաղաղբիւր և այլն:

Տէր Կարապետ քահանայ Տէր Յարութիւնեան<sup>46</sup>, սպաննուած 14 թ.:

**Սալաձոր:** Դիրքը բարձր, ջրերով առատ, կլիման լաւ, 1914 թ. հայեր 526 անձ, թուրքեր 200 անձ, այժմ 7 [հայ] անձ, նոր գաղթական 73 անձ, թուրքեր չկան: Ս. Մինաս եկեղեցին կանգուն, Տէր Տիրատուր քահանայ Սիմէոնեան<sup>47</sup> 14 թ. սպաննուած:

Լոյս Աղբիւր կոչուած տեղն խաչքարերով շրջապատուած եկեղեցի, դրան վրայ երեք հատ խոյարձաններ, իսկ եկեղեցւոյ գերեզմանոցում հինգ խաչքար եւ մի խաչարձան, գիւղից ոչ հեռու մի մեծ ահագին կոթողի նման խաչքար 2<sup>1/2</sup> մեղր բարձրութեամբ եւ 2 մեղր լայնութեամբ, հայկական փակագրերով (անընթեռնելի): Հայկական ամենահին գիւղերից է, ունեցել է 7 գերեզմանոց, երեքը յայտնի, 4-ը անյայտացած: Վերոյիշեալ մեծ խաչքարի մօտ մի բլրակ կայ, ուր պէտք է եղած լինի հին եկեղեցին (կռապաշտական տեղ է, գուցէ յետոյ եկեղեցի...?):

<sup>46</sup> Թէոդիկ զինք կոչած է Տէրտէրեան: Ծնած է 1842-ին, քահանայ ձեռնադրուած 1876-ին (Թէոդիկ, Գողգոթա, էջ 169):

<sup>47</sup> Ծնած է 1876-ին, քահանայ ձեռնադրուած է 1911-ին (նոյն, էջ 168):



Դէպի արեւելեան կողմ եկեղեցւոյ աւերակ գերեզմանոցում ունի մի խաչ-քար եւ մէկ օրօրոց տապանաքար, որու վրայ խաչքար մը կայ հայ տառերով ՌԼԱ (1031) [1582]:

**Ապլհինտի կամ Ապտիւհինտի:** Պասկելիչի ժամանակ հայերը գաղթած են հոս: Հողերի կէսը անջրդի: 1914 թ. հայեր 521 անձ, իսկ թուրքեր 200 անձ, այժմ 6 անձ հայ, 42 անձ եւս նոր գաղթական, թուրքեր չկան: Ս. Սարգիս եկեղեցին<sup>48</sup>, ուսումնարան[ը] եւս քանդուած են, Տէր Ռաֆայէլ քահանան 14ին սպաննուած:

Ս. Սարգիս անունով խաչքարեր-ուխտատեղին գիւղի արեւմտեան կողմը, սրբատեղի, կից հին խաչքարերով, եկեղեցւոյ դրան առջեւ 1<sup>1/2</sup> մեդր բարձր խաչքար կայ, բակում հինգ խաչքար եւս:

Ըստ աւանդութեան Հնդկաստանից եկած մի կրօնական է հիմք դրել այս գիւղին, որի անունը եղել է Ապտ-Իւլ-Հինտի (Հնդկաստանի Աստուծոյ Մառայ) եւ իւր անունով իսկ կոչել գիւղը:

**Եսայ Վանք:** Խարազի, Նոր Շէնի եւ Սալաձորի մէջտեղը, վանք է եղել, գիւղն էլ վանքի անունով կը կոչուի:

Պասկելիչի ժամանակ ժողովուրդը գաղթել է, 45 անձ թուրք կայ միայն, հայկական գերեզմանոց կայ ու վանքի տեղը կան խաչքարերի մնացորդներ (այս վանքի քարերը վարդապետին մէկը փոխադրել է Եփրատի հեղին վրայ, Իլիմայի կամուրջը շինած է):

**Եէնի Գիւղ:** Հայկական գիւղ, Պասկելիչի ժամանակ գաղթած: 914 թ. թուրքեր 25 անձ, կայ հայկական գերեզմանոց եւ փլած եկեղեցի ու խաչքարերի հետքեր, այժմ 12 տուն թուրք կ'ապրին:

#### **Խարազ (ի հնումն Արծն):**

Եփրատի հեղի ափին, հին Արծն քաղաքն է, վանապահ եւ բազմամարդ, որ պարսից տիրապետութեան ժամանակ մեծամեծ կռիւներ մղեցին եւ բազմաթիւ պարսիկ զինուորներ կոտորուեցան հոս, գրաւելուց յետոյ Խարազ (Թշնամու-թիւն) դրին անունը, ցարդ էլ կը մնայ: Սա Բարձր կամ Մեծ Հայքի մայրաքաղաքը կը համարուէր, հնազարեան հնութիւններով հարուստ, 1914 թ. հայեր 1500

<sup>48</sup> Ըստ Հ. Սուֆիաս Էփրիկեանի եւ Թէոդիկի, Ապլհինտի գիւղի եկեղեցին կոչուած է Ս. Աստուածածին: Ըստ Թէոդիկի, եկեղեցին 1915-ին հովիւ չէ ունեցած (Հ. Ս. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, էջ 240, Թէոդիկ, Գողգոթա, էջ 168), իսկ 1 Դեկտեմբեր 1916-ին պատուաւստուած փաստաթուղթի մը համաձայն, այն կոչուած է Սր. Յակոբ (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 142, ք. 37ա):

անձ, թուրքեր 100 անձ, այժմ 33 [հայ] անձ, 370 անձ էլ Ռուսաստան, 77 անձ էլ նոր գաղթական, թուրքեր չկան:

Եկեղեցին Մայր Աստուածածին, երկու քահանայ՝ Տէր Մամբրէ Տէր Սարգսեան<sup>49</sup>, Տէր Ղեւոնդ Տէր Մարկոսեան<sup>50</sup>, սպաննուած 14 թուին:

Նշանաւոր սրբատեղիներ.

Ա. Կարմրաւոր Ս. Խաչ քարուկիր, հին եկեղեցւոյ տեղը, գիւղի արեւմտեան կողմը:

Բ. Ս. Եկեղեցի՝ մի տան մէջ (այժմ քանդուած):

Գ. Հոռոմ խաչ:

Դ. Լուսաղբիւրի մօտ, գեղի շրջակայքը, որի մօտ 2 մեղր երկայնք, 1<sup>1/2</sup> մեղր լաջն խաչքար, հայերէն անընթեռնելի տառերով:

Հին գերեզմանոց, որի մօտ Փողիկ անունով աւերակ գիւղ կայ:

Եկեղեցւոյ աշակողմեան արտաքին որմին վրայ երկու խաչքար, որուն մէկը շրջանակաձեւ-քառաթեւ, իսկ միւսը շրջանակաձեւ քառաթեւեան խաչ, որուն թեւերուն վրայ շինուած է երկու կաթողիկէներու (տապանակ կամ խնկաման) ձեւեր փորագրուած...:

Խաչքարի կտոր մը եւս, որ հին ժամանակուայ գլխարկի ձեւ ունի փաթոցաւոր (կռապաշտական եւ ենիչէրիներու ժամանակի հայ տարագ):

Արեւելեան անկիւնին մէջ մի խաչքար երկու կաթողիկէ շէնքերով:

Հարաւային որմին վրայ խաչքար միջաշորս խաչքարերով, նոյն որմի վրայ եւս երեք հին ձեւով խաչքարեր, որուն միջի խաչը կրկին հին հայոց գլխարկի ձեւով է եւ տակը խաչ մը: Նոյն որմին վրայ փորագրուած խաչքար մը, հին հայ թագաւորագնի հին գլխարկի ձեւով, իսկ անկեան մէջը երկու ծաղկանկարներով խաչքարեր գետեղուած:

Եկեղեցւոյ նորոգութեան յիշատակարան դրան վերեւում է:

Եկեղեցին խիստ մեծ ու բարձր է, աւագ սեղանով եւ երկու պահարաններով, 12 պատուհաններ ունի չորս կողմը, վեց հատ հաստ փայտից սիւններու վրայ փայտաշէն շինուած բայց կրով ու աւագով խտացած: Կայմը եկեղեցւոյ չափ մեծ եւ նոյնիսկ բարձր: Եկեղեցին քանդուած չէ, բացի սեղանից... վերնատունը եւս քանդուած է ու փայտերը տարուած:

Եկեղեցւոյ հին յիշատակարանը, որն առանձին շրջանակի մէջ առնուած եւ գետեղուած էր աւագ սեղանին առջեւ, կայմեան սեղաններու անկեան վրայ ամենաբարձր տեղը, թուրքերը 14 թ. քանդել եւ տարել են:

Եկեղեցւոյ հարաւային կողմը մի բլուր կայ, ուր թուրքերը մի քիչ պեղում են կատարել եւ ի միջի այլ հնութիւնների գտնուել են խոշոր ոսկիներ եւ խոռոչաւոր

<sup>49</sup> Ծնած է 1851-ին, ֆահանայ ձեռնադրուած 1887-ին եւ այրիացեալ (Թլտղիկ, Գողգոթա, էջ 167):

<sup>50</sup> Ծնած է 1845-ին, ֆահանայ ձեռնադրուած 1889-ին (նոյն):

[գրամ մը], մէկը կողմը թագաւոր մը եւ թագուհի մը նստած են... իսկ գրամին միւս կողմը եւս կշեռք մը շնուած է խորհրդաւոր:  
Դպրոց, եկեղեցի չեն քանդուած:

MIHRAN A. MINASIAN

**TWO PREVIOUSLY UNPUBLISHED DOCUMENTS  
ON THE KHACHGAVANK MONASTERY, VILLAGES  
OF GARIN (ERZEROUM) AND THEIR CHURCHES**

**Key words:** Khachgavank, Garin villages, churches, monasteries, inscriptions, D. Tevekelian (Arshak, Suren), Zaven bishop Mahdesi Papaian, crosstones, manuscripts, demography, schools, Armenian Genocide, Ms M9026.

This article contains the first publication of two unique documents, related to and complementing each, which refer to the demographic history and physical heritage—churches, monasteries, inscriptions, crosstones (*khachk'ars*), and schools—of the Armenian-populated villages in the vicinity of Garin (*Erzeroum*) before and after the Genocide.

The first document written in 1899 concerns Khachgavank monastery near Garin. It provides a description of the monastery and copies of a dozens of wall inscriptions. The document's author was D. Tevekelian, who lived in Garin in 1898-1899, and on other occasions wrote under the pseudonyms "Arshag" and "Suren".

The second document concerns the 22 villages of the Garin valley, providing brief information about each village, including the numbers of their Armenian and Turkish populations before and after the Genocide, the date when Turks settled in the village, information about the village school, church, cemeteries and nearby monasteries, etc. The detailed descriptions of the churches and the copies of their inscriptions, as well as the data about the khachkars and several manuscripts, are extremely valuable. The document was prepared during the years 1917-1918, probably by bishop Zaven Mahdesi Papaian, the emissary of the Catholicos of All Armenians in Garin and the local representative of the "Fraternal Aid Union."

It is clear from this document that less than two years after the Genocide, Turks had already managed to demolish numerous churches and monasteries in the villages of Garin.

The published documents can contribute to the better recognition and study of the history and cultural heritage of the villages of the Garin valley.

The documents are provided with brief introduction and references.

**МИГРАН МИНАСЯН**

**ДВА РАНЕЕ НЕ ПУБЛИКОВАВШИХСЯ ДОКУМЕНТА О ХАЧКАВАНКЕ,  
ДЕРЕВНЯХ КАРИНА (ЭРЗЕРУМ) И ИХ ЦЕРКВЯХ**

**Ключевые слова:** Хачкаванк, села Карина (Эрзерум), церкви, монастыри, надписи, Тевекелян (Аршак, Сурен), епископ Завен махтеси Папаян, хачкары, рукописи, демография, школы, Геноцид армян, рукопись М9026.

В статье представлены два взаимосвязанных и дополняющих друг друга уникальных документа, в которых говорится о школах, церквях, монастырях, надписях, хачкарах, и т.д., армянском и другом населении деревень Карина (Эрзерум) до и после Геноцида.

Первый документ был написан в 1899 году и рассказывает об историческом монастыре Хачкаванк недалеко от Карина. В документе дано описание монастыря и копии десятков настенных надписей. Автор документа - Т. Тевекелян, проживавший в Карине в 1898-1899 гг., в других случаях писавший под псевдонимами "Аршак" и "Сурен".

Во втором документе даются краткие сведения о 22-х селениях Эрзерумской равнины: численность их армянского и турецкого населения до и после Геноцида, дата заселения в села турок, сведения о сельской школе, церкви, кладбище и близлежащих монастырях и т. д. Большое значение имеют подробные описания церквей и копии их настенных надписей, а также данные о хачкарах и некоторых рукописях. Документ был подготовлен в 1917-1918 годах, вероятно, епископом Завеном Махтеси Папаяном, посланником Католикоса всех армян в Карине и местным представителем «Союза братской помощи». Из документа можно заключить, что менее чем через два года после Геноцида туркам уже удалось снести многочисленные церкви и монастыри в селах Карина.

Опубликованные документы могут способствовать лучшему изучению истории и культурных памятников деревень долины Карина.

Документы снабжены кратким введением и примечаниями.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### Գագիկ Դանիելյան

Կիրիկյան Հայաստանն Իզգ ալ-Դին իբն Շադգադի երկերում  
(աղբյուրագիտական ներածություն)..... 5

#### Վահե Թորոսյան

Ֆրանսիական հետքեր Կիրիկիայի հայոց արքաների թագադրման ձեսում..... 32

#### Աշոտ Սարգսյան

Հայոց դարձի երկրորդ փուլը. Հիմնական քաղաքական  
օրակարգը սպասարկող ծրագիրը ..... 48

#### Օլգա Վարդապարյան

Բարսեղ Կեսարացու «Յաղագս վեցօրեայ արարչութեան»  
աշխատությունը և Մխիթար Գոշի առակները (ոուսերեն)..... 74

#### Հասմիկ Իրիցյան

Դավիթ եպս. Գեղամեցին գրի՞չ, թե՞ նոր սքանչելագործ  
միևնույն ձեռագրում (ՄՄ 3812, Հայսմավուրք)..... 94

### ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

#### Կարեն Մաթևոսյան

Դլաձորի համալսարանը և Վերին Նորավանքի դպրոցը ..... 110

#### Թամարա Մինասյան

Գրիչ և մանրանկարիչ Մխիթար Անեցու կյանքն ու  
ձեռագրական ժառանգությունը ..... 133

#### Լուսինե Թումանյան

Արտամետ քաղաքի գրչության կենտրոնը ..... 146

#### Գոհար Չատյան

Դրիմի նշանավոր գրիչ Նատերի՝ ընտանեկան կարևոր  
մի գրվագի ճշգրտման փորձ ..... 158

### ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

#### Կարինե Մոսիկյան

Թանկարժեք քարերը և դրանց բուժական  
հատկությունները ըստ միջնադարյան աղբյուրների ..... 170

**Գայանե Սահրադյան**

18-րդ դարի հայերեն ակրապատիւնը (ՄՄ 372)  
և արևելյան բժշկական ձեռագրային ավանդույթը ..... 198

**ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ****Հակոբ Քյոսեյան**

Տիրատուր Կիլիկեցու Քարոզ եկեղեցույ, որ ասէ «Տէր, սիրեցի  
զվայելչութիւն տան քո եւ զտեղի յարկի փառաց քոց» ճառը..... 208

**Միհրան Ա. Մինասեան**

Երկու անտիպ փաստաթուղթ՝ Խաչկավանքի եւ  
Կարնոյ գիւղերու ու անոնց եկեղեցիներու մասին ..... 227

**Ռուզան Պողոսյան**

«Բանք իմաստասիրաց աւգտակարք եւ պիտանացուք» ..... 250

**Գոհար Մուրադյան**

«Բանք իմաստասիրաց» ժողովածուի հունարեն աղբյուրը ..... 278

**Առեկ Աբարյան**

Առաքել Սյունեցու՝ Տյառնընդառաջի, Ծաղկազարդի,  
Հարության և Վարդանանց սրբերին նվիրված անտիպ տաղերը ..... 313

**Տ. Շահե Քահանա Հայրապետյան**

Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի մի քարոզ ..... 323

**ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ****Ազատ Բոզոյան, Զարուհի Հակոբյան**

Գևորգ Դազարյան, Ուղղափառ հայք, Երևան, 2024, 241 էջ ..... 336

Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների  
ձևավորմանը վերաբերող պահանջներ ..... 344

## CONTENTS

### HISTORY AND PHILOLOGY

#### **Gagik Danielyan**

Cilician Armenia in the Works of ʿIzz al-Dīn ibn Shaddād  
(a Critical Introduction) .....5

#### **Vahe Torosyan**

French Traces in the Coronation Ordo of the Armenian Kingdom of Cilicia..... 32

#### **Ashot Sargsyan**

The Second Phase of the Christianisation of Armenia:  
A Program Serving a Fundamental Political Agenda .....48

#### **Olga Vardazaryan**

Basil of Caesarea's Hexaameron and the Parables of Mkhit'ar Gosh..... 74

#### **Hasmik Iritsyan**

Bishop David Geghamets'i as a Scribe or a New Wonder-worker  
in the Same Manuscript? (Ms M3812, Synaxarium).....94

### MANUSCRIPT CULTURE

#### **Karen Matevosyan**

Gladzor University and the School of Verin (Upper) Noravank' Monastery..... 110

#### **Tamara Minasyan**

The Life and Manuscript Legacy of the Scribe and Miniaturist Mkhit'ar Anets'i.....133

#### **Lusine Tumanyan**

The Scriptorium of Artamet.....146

#### **Gohar Chatyan**

An Attempt to Clarify an Important Family Episode of the  
Famous Crimean Scribe Nater.....158

### NATURAL SCIENCES

#### **Karine Mosikyan**

Gemstones and Their Medicinal Properties According to Medieval Sources.....170

#### **Gayane Sahradyan**

A 18th Century Armenian Pharmacopoeia Akhrabadin (M 372)  
and The Eastern Medical Manuscript Tradition.....198

## PUBLICATIONS

### **Hakob Kyoseyan**

Tiratur Kilikets'i's *Sermon to the Church* "LORD, I have loved the habitation of your house, and the place where your honour dwelleth" ..... 208

### **Mihran A. Minasian**

Two Previously Unpublished Documents on the Khachgavank Monastery, Villages of Garin (Erzeroum) and Their Churches ..... 227

### **Ruzan Poghosyan**

"Useful and Beneficial Sayings of Philosophers" ..... 250

### **Gohar Muradyan**

The Greek Source of the Sayings of the Philosophers ..... 278

### **Arevik Arabyan**

Unpublished Odes (Taghs) of Aṙak'el Siwnets'i Dedicated to the Feasts of Candlemas, Palm Sunday, Easter, and the Saint Vardanids ..... 313

### **Fr. Shahe Hayrapetyan**

A Sermon by Catholicos Simēon Erevants'i ..... 323

## BOOK REVIEW

### **Azat Bozoyan, Zaruhi Hakobyan**

Gevorg Kazaryan, *Orthodox Armenians*, Yerevan, 2024, 241 p. .... 336



## СОДЕРЖАНИЕ

### ИСТОРИЯ И ФИЛОЛОГИЯ

#### **Гагик Даниелян**

Киликийская Армения в сочинениях Изз Ад-Дина ибн Шаддада  
(историографическое введение)..... 5

#### **Ваэ Торосян**

Французский след в коронационном ритуале Армянского  
Киликийского царства..... 32

#### **Ашот Саргсян**

Второй этап обращения армян в христианство: программа, обслуживающая  
основную политическую повестку..... 48

#### **Ольга Вардазарян**

«Шестоднев» Василия Кесарийского и притчи Мхитара Гоша..... 74

#### **Асмик Ирицян**

Епископ Давид Гегамеци как писец или новый чудотворец в одной и той же  
рукописи? (№ 3812 из собрания Матенадарана, Синаксарий / Айсмавурк)..... 94

### РУКОПИСНАЯ КУЛЬТУРА

#### **Карен Матевосян**

Университет Гладзор и школа монастыря Верин (Верхний) Норованк..... 110

#### **Тамара Минасян**

Жизнь и рукописное наследие писца и миниатюриста Мхитара Анеци..... 133

#### **Лусине Туманян**

Скрипторий города Артамет..... 146

#### **Гоар Чатян**

Попытка уточнения важного семейного эпизода известного  
крымского писца Натера..... 158

### ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

#### **Карине Мосикян**

Драгоценные камни и их целебные свойства по  
средневековым источникам..... 170

**Гаяне Сахрадян**

Армянская фармакопея *ахрабадин* XVIII века (рукопись М372)  
в традиции восточных медицинских рукописей.....198

**ПУБЛИКАЦИИ****Акоп Кеосеян**

«Церковная проповедь Тиратура Киликеци, гласящая Господи!  
Возлюбил я обитель дома Твоего и место жилища славы Твоей».....208

**Мигран Минасян**

Два ранее не публиковавшихся документа о Хачкаванке и  
деревнях Карина (Эрзерум).....227

**Рузан Погосян**

«Полезные и поучительные изречения философов».....250

**Гоар Мурадян**

Греческий источник древнеармянских «Изречений философов».....278

**Аревик Арабян**

Неизданные стихи Аракела Сюнеци о Сретении Господнем, Вербном  
воскресении, воскресении Христа и посвященные Святым Варданидам.....313

**Священник Шагэ Айрапетян**

Проповедь католикоса Симеона Ереванци.....323

**РЕЦЕНЗИЯ****Азат Бозоян, Заруи Акобян**

Геворг Казарян, *Православные армяне*, Ереван, 2024, 241 с.....336

**ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**Հատոր 38**

**BULLETIN OF MATENADARAN**

**Volume 38**

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**

**Том 38**

Ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի  
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի  
Շապիկին՝ Ծնունդ, ծաղկող՝ Մխիթար Անեցի, Ավետարան, 14-րդ.դ, ՄՄ 7740:  
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան  
Տեխնիկական խմբագիր՝ Մարիամ Բրուտյան  
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Ձափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 22, տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մերոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի

ինստիտուտի հրատարակչություն, Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

[publishing.matenadaran@gmail.com](mailto:publishing.matenadaran@gmail.com)

Ամսագրի թվային տարբերակը՝

[banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/](http://banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/)